Միևնոյն ժամանակ մակարներն առանց այլևայլութեան սկսում են սրով խփել ու սպանել պատահած հաւերին և սրանց ոչ մի տէրը իրեն իրաւունք չի համարում պահանջել հաւի արժէքը։ Երբեմն այսպէս են վարւում նաև պատահած գառների և ուլերի հետ [1])։

Բորչալիում հարսնառ գնալիս, եթէ թագուորը բարգահ կարէքի ժամանակ որոշուած նուէրներից պակաս կամ վատ է բերել, հարսնացուի կողմի ազգականները ծեծում են թագաւորի մակարներին, թէ ինչի են նոքա քիչ կամ վատ բերել։ Սովորաբար հարսի գիւղի ազգականների համար թագուորը նուէր է տանում թխուածքներ և հաւ, ապա թէ ոչ այդ ազգականները կը յարձակուեն թագուորի մակարների վրայ և, իրենց պահանջը յայտնելով, կը ծեծեն նրանց [2])։

Թշնամական այդ յարաբերութիւններն երկու կողմերի միջև աւելի ևս կենդանի են ներկայացւում՝ հարս թագցընելու սովորութեան մէջ։

Վարանդայում, երբ փեսան իւր ընկերներով գալիս է հարսնացուի տունը, «մի քանի բոպէում բոլորը խուժում են ներս։ Ղարագամի մի անկիւնում մի վարագուրով կտրած է լինում, որ կոչւում է *պուճախ*։ Այստեղ է լինում հարսնացուն իւր մի քանի ընկերուհիների հետ։ Մակարները գնում, նստում են վարագոյրի մօտ, իսկ քաւորը, թագուորը և փեսեղբայրը կանգնում են գորգի առաջ վառ մոմերը ձեռքին։ Տան ծերունին մօտենում է թագաւորին և նուիրելով նրան մի գօտի կամ մի ուրիշ բան. խնդրում է նստել։ Թագուորը, եթէ գոհ է մնում, նստում է, իսկ եթէ ոչ, կանգնած մնում»։ Այնուհետև անեցիներից ներկայ եղողները մօտենում են ու աղերսում, որ փեսան բաւականանայ ստացած ընծաներով [3])։

---

[1]) Ibid. եր. 34.

[2]) Եր. Լալայեան՝ Բորչալուի գաւառ—Ազգագր. Հանդէս. 1902 թ. գիրք IX եր. 244—445.

[3]) Եր. Լալայեանի՝ Վարանդա—Ազգագր. Հանդէս. 1898 թ. գիրք. Բ.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան